ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
Մոավյան 1, Երևան 375049, Հայաստանի Հանրապետություն
հեռ.597196

ՏԵՂԵԿԱԹԵՐԹ 1 (սեպտեմբեր, 1991 թ)

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Ձեր առջև է ՀՄՄ տեղեկատու պարբերականի առաջին համարը: Ապագայում նրա էջերում հնարավորին չափով կլուսաբանվի հայկական մաթեմատիկական աւօրյան, կտրվեն տեղեկու – թյուններ ՀՄՄ Խորհուրդի և գիտական նիստերի, սեմինարների, հրավիրված մասնագետների դասախոսությունների, թեզերի պաշտպանությունների, նոր գրքերի և ամսագրերի, մրցույթների, թափուր տեղերի, նոր նշանակումների մասին, կհրապարակվեն այլ նյութեր: Տեղեկաթերթի հաջողությունը մեծապես պայմանավորված է մեր բոլորի ակտիվ համագործակցությունով:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սույն թվի մայիսի 18–ին Երևանի համալսարանի մեծ դահլիճում կա– յացել է ՀՄՄ հիմնադիր Համաժողովը, որին մասնակցել են շուրջ 200 գիտնականներ: Ող– ջույնի խոսքով մասնակիցներին դիմեցին համալսարանի ռեկտոր պրոֆ. Նորայր Առաքելյանը և հանրապետության վարչապետ պ. Վազգեն Մանուկյանը: Համաժողովը քննարկեց և ընդունեց ՀՄՄ Կանոնադրությունը, ապա ընտրեց ՀՄՄ ղեկավարություն:

ՀՄՄ Նախագահ ընտրվեց պրոֆ. Ալեքսանդր Թալալյանը՝ Երևանի համալսարանի մաթե– մատիկայի ֆակուլտետի դեկան, ՀԳԱ թղթ.անդամ:

ՀՄՄ Խորհրդի կազմի մեջ ընտրվեցին պ.պ.

Սերգեյ Անտոնյան	Սարգիս Հակոբյան	Կարեն Յաղջյան
Սամվել Ապրեսյան	Հրաչիկ Հայրապետյան	Վլադիմիր Յավրյան
Նորայր Առաքելյան	Տիգրան Հարությունյան	Բորիս Նահապետյան
Վիկտոր Արվումանյան	Ֆելիքս Հարությունյան	Ռոմեն Ծահքաղյան
Բագրատ Բատիկյան	Հայկ Ղազարյան	Ֆայզո Ծամոյան
Գեղամ Գևորգյան	Ղազարոս Ղազարյան	Ծվայց Սահակյան
Սամվել Դալալյան	Վալերի Մարտիրոսյան	Սոկրատ Սիմոնյան
Նորայր Ենգիբարյան	Վարդան Մարտիրոսյան	Աշոտ Վաղարշակյան
Վանիկ Զաքարյան	Յուրի Մովսիսյան	Վիկտոր Օհանյան
Ալեքսանդր Թալալյան		

ՀՄՄ Վերստուգիչ հանձնախմբի կազմի մեջ ընտրվեցին պ.պ.

Ռաֆիկ Արամյան	Աշոտ Կակոսյան	Երվանդ Մկրտչյան
Արթուր Է. Ավետիսյան	Համլետ Մարտիրոսյան	Բորիս Սահակյան
Ռոբերտ Դավթյան		

*Սույն թվի մայիսի 24–ին կայացավ Խորհրդի առաջին նիստը, որտեղ ընտրվեցին փոխ– նախագահները և Վարչության կազմը, քննարկվեց Միության ապագա գործունեությունը:

ՀՄՄ փոխնախագահներ և Վարչության անդամներ ընտրվեցին պ.պ.
Բորիս Նահապետյան, ֆ.մ.գ.դ., առաջատար գիտ.աշխ.(Մաթ. ինստ.)
Գեղամ Գևորգյան, ֆ.մ.գ.թ., դոցենտ (Համալսարան),
վարչության անդամներ պ.պ.

Վիկտոր Արվումանյան (քարտուղար)	Վարդան Մարտիրոսյան
Նորայր Ենգիբարյան	Ռոմեն Ծահքաղյան
Հայկ Ղազարյան	Վիկտոր Օհանյան (ատենապետ)

*Հուլիսի 10–ին ՀՀ Արդարադատության նախարարությունը գրանցեց **ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ**:

*Սույն թվի հուլիսի 22–ին կայացավ Խորհրդի երկրորդ նիստը, որտեղ քննարկվեցին ՀՄՄ մեջ ընդունվելու դիմումները: Որոշվեց Միության անդամ համարել բոլոր այն անձանց, որոնք դիմել են Համաժողովի ընթացքում, իսկ մյուսներին ընդունել անհատական կարգով: